



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց»
ՊՈԱԿ

Առարկա՝ Ինֆորմատիկա

Թեմա՝ Գնահատում, գնահատման տեսակները, գնահատման գործիքները դասավանդման շրջանակներում

Վերապատրաստող, մենթոր՝ Մարիամ Սեդրակյան

Ուսուցիչ՝ Մերի Հունանյան

Ն.Գետաշեն 2022

Բովանդակություն

Ներածություն -----	3
Գլուխ 1 Գնահատում-----	4
1.1 Ձևավորող գնահատում-----	5
1.2 Միավորային գնահատում-----	7
Գլուխ 2 Խմբի նկարագիր-----	10
Փորձարարական դաս-1 -----	10
Փորձարարական դաս-2 -----	11
Եզրակացություն -----	12
Գրականության ցանկ -----	13
Դասապլան-1 -----	14
Դասապլան-2-----	17

Ներածություն

Գնահատումը դասի կարևորագույն բաղադրիչ է, առանց որի հնարավոր չէ պատկերացնել այն: Տարբեր առարկաների շրջանակներում գնահատման տեսակն ու հնարները տարբեր կերպ են ընկալվում: Ուսուցչից պահանջվում է աշակերտներին զինել, կրթել տարրական հմտություններով, որը հիմք կհանդիսանա հետագայում, աստիճանաբար ստանալիք գիտելիքների համար: Կախված դասարանից, աշակերտի արձագանքից, ուսուցիչը պետք է ունենա մեծ թվով անակնկալների պատրաստի օրինակներ, որոնք պետք է կիրառի դասն ավելի հետաքրքիր և բովանդակալից դարձնելու համար: Այդ ընթացքում սովորողը պետք է հասկանա, որ յուրաքանչյուր առարկա ունի ազդեցությունն և դեր սովորողի զարգացման գործում: Մակայն հարկ է փաստել, որ դպրոցի համար նպատակային է կիրառել գնահատումը: Ինֆորմատիկայի ուսուցչի վրա ևս մեծ պատասխանատվություն է դրված՝ հաշվի առնելով SS-ների աննախադեպ զարգացումն ու հասանելիությունը սովորողների համար: Ինֆորմատիկայի ուսուցչի առաջ կանգնած է առարկայի ուսուցման ընթացքում դասընթացի օգնությամբ նվազեցնել նորագույն տեխնոլոգիաների վատ ազդեցությունը սովորողների զարգացման դաստիարակության մեջ: Ուստի կարևոր է SS ուսուցիչը կարողանա կիրառել գնահատումը, տեսակները, գործիքները՝ բարձրացնելով սովորողների դասին մասնակցելու մոտիվացիան: Ընթացիկ գնահատման համակարգի հիմքում ընկած են հավաստիության, հիմնավորվածության, հուսալիության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները:

Հետազոտության նպատակն է.

- սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության ընթացքի արձանագրումը, թերությունների բացահայտումն ու շտկումը:
- Գնահատման տարբեր տեսակների հնարները, վերհանման և դրանց արդյունավետ կիրառման մեխանիզմների ներկայացումը:

Գլուխ 1

Գնահատում

Գնահատումը սովորողի մասին տեղեկություն ստանալու, հավաքելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության բովանդակային և կազմակերպչական աշխատանքների արդյունքներն ի մի բերելու և վերահսկելու գործընթաց է:

Գնահատման հիմնական նպատակը սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման ու տիրապետման աստիճանի, նրանց անձնային որակների ստուգումն է, ինչպես նաև ուսման որակի բարելավումն ու վերահսկումն է: Գնահատումը կարող է լինել օբյեկտիվ կամ սուբյեկտիվ: Օբյեկտիվ գնահատումը կախված չէ գնահատողի անձնական մտածողությունից կամ վերաբերմունքից, օրինակ՝ պատասխանի ընտրությամբ առաջադրանքը: Գնահատումը սուբյեկտիվ է, երբ այն կախված է գնահատողի անձնական դատողություններից, սկզբունքներից ու վերաբերմունքից: Սուբյեկտիվ են համարվում բանավոր հարցումները, պատասխանի շարադրանքով առաջադրանքները, կամ որոշ գործնական աշխատանքներ:

ՀՀ հանրակրթությունում այժմ գործում է գնահատման երկու հիմնական ձև՝ միավորային և ձևավորող:

1.1 Ձևավորող գնահատում

Ձևավորող գնահատման նպատակը ուսումնական գործընթացում ուսուցիչների սովորողների գործունեության ճշգրտումն ու շտկումն է՝ հիմնվելով ուսումնասության ընթացիկ արդյունքների վրա: Գործունեության շտկումը ենթադրում է ուսուցչի և սովորողների առջև դրված ուսումնական խնդիրների համատեղ լուծում՝ արդյունքները բարելավելու նպատակով: Առանց հայտորոշման ուսուցիչները չեն կարող անհրաժեշտ մակարդակով կիրառել ձևավորող գնահատումը, իսկ ձևավորող գնահատման որակն իր հերթին ազդում է միավորային գնահատման արդյունքների վրա: Պահպանելով գնահատման իրականացման հետեւողականությունը՝ կարելի է հասնել ուսումնասության արդյունքների բարձր մակարդակի:

ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Ձևավորող գնահատումը ուսուցչի կողմից գնահատման 5 բաղադրիչների պլանավորված եւ պարբերական օգտագործումն է ամենօրյա աշխատանքում

- Ուսուցչի կողմից արդյունավետ հետադարձ կապի ապահովում:
- Սովորողների ակտիվ մասնակցություն սեփական ուսումնասության գործընթացին:
- Ուսուցման գործընթացի ճշգրտում եւ շտկում՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները:
- Գնահատման՝ սովորողների մոտիվացիայի եւ ինքնագնահատականի վրա խորքային ազդեցության գիտակցում, որն իր հերթին կարելու ազդեցություն ունի ուսուցման արդյունավետության վրա:
- Սովորողների կողմից իրենց գիտելիքները ինքնուրույն գնահատելու ունակության ձևավորում:

Ձևավորող գնահատման առանձնահատկությունն այն է, որ գնահատման հնարները կիրառվում են յուրաքանչյուր դասին: Նշանակում է՝ ուսուցիչը եւ սովորողները կարող են արդեն ամենավաղ փուլերից սկսած՝ ազդեցություն ունենալ ուսուցման եւ առհասարակ կրթության որակի բարելավման վրա: Ձևավորող

գնահատումը կիրառվում է թե՛ ուսուցչի, թե՛ սովորողի համար ընդունելի հնարներով:

Ուսուցման գործընթացում գնահատման օբյեկտը սովորողի գործունեությունն է (ոչ թե սովորողը), որն ուղղված է սովորողի ուսումնասության նպատակի իրագործմանը: Հետեւաբար, գնահատման բոլոր ձևերի ու տեսակների հիմքը ուսուցման նպատակի ձևակերպումն է: Դասի հիմքը ուսուցման նպատակն է. եւ՛ ուսուցչի եւ՛ սովորողի ողջ գործունեությունը պետք է ուղղված լինի այդ նպատակի իրագործմանը: Նպատակով են պայմանավորվում դասի ընթացքը, մեթոդների, միջոցների ու գնահատման ընտրությունը:

Յուրաքանչյուր դասին ուսուցչի համար կարևոր է խորհել հետևյալ հարցերի շուրջ.

- Որքանո՞վ են սովորողները հասկացել անցած նյութը:
- Ինչպե՞ս կարող եմ ստուգել
- Ո՞ր առաջադրանքն էր դժվար սովորողների համար
- Եթե առաջադրանքը դժվարություն է առաջացրել, ապա ի՞նչ պետք է փոխել դասավանդման մեթոդներում: Գոյություն ունեն սովորողների ակտիվության մի քանի ուղղություններ.
- ուսուցման նպատակների եւ արդյունքների ընկալում,
- սովորողների կողմից գնահատման չափանիշների ընկալում,
- ուսուցչի կողմից համապատասխան հնարների կիրառում:

Դասի նպատակի ընկալումը թույլ է տալիս սովորողին դառնալ գործընթացի կազմակերպման գործուն մասնակիցը: Վերջնարդյունքները եւս պետք է հասկանալի լինեն սովորողներին՝ նրանց դարձնելով գնահատման չափանիշների մշակման մասնակից: Նպատակներն ու ակնկալվող արդյունքները պետք է ակնառու ներկայացված լինեն (գրատախտակին, պաստառին, էկրանին եւ այլն), որպեսզի ուսուցիչն ու սովորողները հնարավորություն ունենան անդրադառնալու դրանց եւ ստուգելու իրենց ձեռքբերումները:

Ձեւավորող գնահատումը ուսուցչի եւ սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման

գործընթացի բարելավման եւ արդյունավետության բարձրացման նպատակով: Հետադարձ կապը ուսուցչին հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե ինչպես է ընթանում ուսուցման գործընթացը, տեղեկատվություն է տրամադրում սովորողների ձեռքբերումների եւ դժվարությունների մասին:

1.2 Միավորային գնահատում

Ամփոփիչ/միավորային գնահատումն ուսումնառության ընթացքում սովորողի ձեռքբերումների մակարդակը թվանշանով արտահայտելն է՝ համաձայն առարկայական չափորոշչի: Ա. Էյնշտեյնն ասել է «Դասարանում յուրաքանչյուրը հանճարեղ է, բայց եթե դուք ձկանը պետք է գնահատեք ծառի վրայով սողալու կարողության համար, ապա նա ամբողջ կյանքում կտատապի այն մտքից, որ ինքն անկարող է»: Այսպիսով, միավորային գնահատումը պետք է լինի հնարավորինս օբյեկտիվ և հնարավորություն տա ստուգելու ցանկացած սովորողի իրական կարողությունները: Միավորային գնահատման ներկայումս կիրառվող տեսակներն են.

1.Բանավոր հարցում

2.Գործնական աշխատանք

3.Թեմատիկ աշխատանք

Տնային և կարճ ժամանակի համար նախատեսվող աշխատանքների միավորային գնահատումը պարտադիր չէ:

Ստուգման տեսակների բազմազանությունը նպատակ ունի տարբեր տեսանկյուններից չափել սովորողի գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, որպեսզի արդյունքում ունենանք առավել հավաստի գնահատական:

Սովորողի ուսումնառության արդյունքների միավորային գնահատման ենթակա բանավոր, գրավոր և գործնական աշխատանքների ստուգումից ստացված արդյունքների միավորների բնութագրիչները սահմանված են Հանրակրթության պետական չափորոշիչի պահանջներին համապատասխան:

Սակայն այսօր գնահատման կարգը փոխվել է

Միավորային գնահատում իրականացվում է նաև ԿԱՊԿՈՒ սովորողների համար:

2014թ.-ի դեկտեմբերի 2-ին «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի մեջ համընդհանուր ներառումն ամրագրվել է որպես պետական քաղաքականություն: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող(այսուհետ՝ ԿԱՊԿՈՒ) երեխաների կրթության իրավունքի իրացման գործընթացը հիմնվում է կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովման սկզբունքների վրա:

Ներառական կրթությունը համարվում է յուրաքանչյուր սովորողի կարողությունների լիարժեք բացահայտման միջոցով որակյալ կրթական ծառայությունների մատուցման գործընթացների ամբողջություն:

Ներառական կրթությունը ենթադրում է բոլոր՝ այդ թվում ԿԱՊԿՈՒ սովորողների ներառումը տվյալ դասի ուսումնական նյութի յուրացման գործընթացում:

Ներառական կրթությունը շարունակական գործընթաց է, որն ուսուցչից պահանջում է ճիշտ կազմակերպել ուսումնական գործընթացը՝ կարևորելով սովորողի գնահատումն ընդհանրապես և մասնավորապես ԿԱՊԿՈՒ սովորողի գնահատումը:

Քանի որ ԿԱՊԿՈՒ սովորողները ներառվում են ուսումնական գործընթացում՝ նրանց գնահատումը ևս պետք է իրականացվի առանց խտրականության՝ օգտագործելով միավորային գնահատման համապատասխան տեսակները (կախված ներառման կարիքից) և գնահատման 10 միավորային սանդղակը: Հաշվի առնելով ԿԱՊԿՈՒ սովորողների առանձնահատկությունները, ուսումնական ձեռքբերումների ստուգման և գնահատման միջոցները հարմարեցվում են նրանց ընկալման և մտավոր գործունեության կարողություններին: Առաջադրանքները կարելի է կազմել ԿԱՊԿՈՒ յուրաքանչյուր սովորողի համար՝ չափորոշչի նվազագույն պահանջները՝ անհրաժեշտության դեպքում դրանք տրոհելով և հարմարեցնելով այդ սովորողների ընկալման հնարավորություններին: Ամփոփիչ աշխատանքները պետք է հարմարեցվեն ԿԱՊԿՈՒ սովորողի կարիքներին՝ ըստ անհրաժեշտության ապահովելով լրացուցիչ ժամանակ, հանգստանալու ընդմիջումներ:

Սովորողը կարող է իր պատասխանը գրի առնել համակարգչի կամ այլ տեխնիկական միջոցով:

Գնահատման և գրանցման համար կիրառելի են ստուգաթերթեր (արձանագրում են այս կամ այն հատկանշի առկայությունը կամ բացակայությունը), թեստեր, որոնք պարունակում են չափորոշչային նվազագույն պահանջների տրոհված մասերին համապատասխանող առաջադրանքներ:

Գնահատման գործընթացը պետք է պայմաններ ընձեռի սովորողներին իրենց գիտելիքների և ներուժի արտահայտման համար: Այդ իսկ պատճառով կարևոր է, որ գնահատումն իրականացվի սովորողի համար անմիջական, հանգիստ և բնական պայմաններում: Այն պետք է հնարավորություն ընձեռի սովորողի նկատմամբ արդար վերաբերմունքի դրսևորման համար, հիմնված պետք է լինի հավասարության սկզբունքի և օբյեկտիվ գնահատման հիմքի վրա:

ԿԱՊԿՈՒ սովորողի միավորային գնահատման կիրառման քանակները, կախված սվյալ սովորողի կարիքի առանձնահատկություններից, կարելի է հասցնել թույլատրելի նվազագույն քանակներին:

Գլուխ 2

2.1 Խմբի նկարագիր

Հետազոտական աշխատանքը անցկացվել է Գեղարքունիքի մարզի Ն. Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանի 2-րդ խմբում: Խմբում սովորում են 15 աշակերտ՝ 6 տղա և 9 աղջիկ:

Փորձարարական դաս-1

Դասը՝ «Անհատական համակարգչի ընդհանուր կառուցվածքը»:
Այն սկսվեց ինչպես միջտ ներկա-բացակայով: Հետո ամփոփվեց անցած դասը՝ բանավոր և գրավոր հարցերով: Այնուհետև, դասարանը բաժանվեց 4 խմբի և բացատրվեց նոր դասը, հետո անցկացվեց ձևավորող գնահատում՝ հարցերի միջոցով, պարզվեց, որ 1-ին և 3-րդ խմբում չեն հասկացել թե ինչ է պրոցեսորը, ևս մի անգամ բացատրվեց՝ մոտենալով խմբին: Բաժանվեցին խմբերին քարտեր, և հանձնարարվեց գրել տետրերում: Հանձնարարված էր՝ բացատրել թե ամենահասարակ թվաբանական հաշվարկ իրականացնելու համար համակարգիչը ինչ պետք է կարողանա անի, ինչպիսի սարք կա համակարգային բլոկում, ինչ դեր է կատարում մկնիկը և ստեղնաշարը, և որ սարքերի համակցությունն են անվանում պրոցեսոր: Բաժանվեցին ինքնագնահատման ռուբրիկներ եւ հանձնարարվեց լրացնել: Իրականացվեց ինքնագնահատում ռուբրիկի միջոցով: Մոտենալով համակարգչին խմբերը սկսեցին բացատրել իրենց տված հանձնարարությունը և գնահատվեցին:

Դասը ավարտվեց տնային առաջադրանքի հանձնարարումով:

2.2 Խմբի նկարագիր

Երկրորդ դասը անցկացվեց 7-րդ դասարանում: Խմբում սովորում են 12 աշակերտ՝ 7 տղա և 5 աղջիկ:

2.2 Փորձարարական դաս-2

Դասը՝ <<Փաստաթղթի նախնական դիտում և տպագրում>>: Դասը սկսվեց անցած թեմայի ամփոփումով: Հետո բացատրվեց նոր դասը և աշակերտները խառը նստեցին համակարգչի մոտ՝ հանձնարարվեց տեքստեր հավաքեն Word տեքստային խմբագրիչով, կարողանան փաստաթուղթը տպելուց առաջ դիտել և տպել՝ ամբողջ փաստաթուղթը, նշված հատվածը, ընթացիկ էջը, նշված համարներով էջերը: Մոտենալով նրանց պարզ դարձավ, որ ոչ բոլորը կարող են: Եվ այն աշակերտը ով չէր հասկացել նրա կողքին նստեց թեման ընկալած աշակերտը՝ տալով հնարավորություն օգնի և բացատրի: Մյուսներին՝ ովքեր մասամբ էին հասկացել՝ ևս մի անգամ բացատրվեց: Բաժանվեցին էլքի քարտեր և դրա միջոցով ամփոփվում է հանձնարարված նյութի գլխավոր կետերը: Դասը ավարտեցին՝ տպելով փաստաթղթեր ըստ տրված հանձնարարության և գնահատվեցին՝ հիմք ընդունելով նրանց գիտելիքը, կարողությունները և հմտությունները:

Եզրակացություն

Գնահատում, գնահատման տեսակները, գնահատման գործիքները դասավանդման շրջանակներում: Հետազոտության նպատակն էր՝ թերությունների բացահայտումն ու շտկումը, առաջադիմության ընթացքի արձանագրումը, գնահատման տարբեր տեսակների հնարները, վերհանման և դրանց արդյունավետ կիրառման մեխանիզմների ներկայացումը:

Հետազոտական մի դասն անցկացրեցի 6-րդ դասարանում, մյուսը 7-րդ դասարանում:

Դասի սկզբում անցկացվեց ձևավորող գնահատում՝ որքանով են սովորողները հասկացել նյութը, ո՞ր առաջադրանքն էր դժվար սովորողների համար: Եթե առաջադրանքը դժվարություն է առաջացրել, ապա փոխել եմ դասավանդման մեթոդները՝ կիրառելով համապատասխան հնարներ: Հետո բանավոր հարցման և գործնականի համադրմամբ միավորային գնահատման միջոցով օբյեկտիվորեն ստուգել եմ յուրաքանչյուր սովորողի իրական կարողությունները:

Վերլուծելով հետազոտական դասերի արդյունքները՝ եկա այն եզրակացության, որ գնահատումը հնարավորություն է տալիս.

1. նյութի ճիշտ մատուցում
2. ուսուցիչ-աշակերտ կապ
3. նյութի յուրացում դասի ընթացքում
4. դասարանի կառավարում
5. աշակերտների գնահատման հիմնավորում:

Այսինքն՝ գնահատումը, տեսակները, գործիքները ճիշտ և տեղին կիրառելու դեպքում աշակերտների մեծամասնությունը յուրացնում է նյութը, դասապրոցեսի ընթացքում սովորողների մեծամասնությունը խրախուսվում են, գնահատվում են իրենց կարողություններին համապատասխան և հիմնավորված:

Գրականության ցանկ

1. Ինֆորմատիկա: Ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկ: Երևան-2007
2. Ինֆորմատիկա 6-րդ դասարանի դասագիրք /Ս. Ս. Ավետիսյան, Ս. Վ. Դանիելյան/,
3. Ինֆորմատիկա 7-րդ դասարանի դասագիրք /Ս. Ս. Ավետիսյան, Ս. Վ. Դանիելյան/
4. <https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page.html>

Հավելված-1
Դասապլան-1

Ուսուցիչ՝ Մերի Հունանյան

Առարկա	Ինֆորմատիկա	Ամսաթիվ	Կիսամյակ	1-ին	Դասարան	6
Թեմա	Անհատական համակարգչի ընդհանուր կառուցվածքը					
Օգտագործվող նյութեր	6-րդ դասարանի դասագիրք, տետր, համակարգիչ					
Դասի նպատակը	<ul style="list-style-type: none"> • Ամրապնդեն գիտելիքներ համակարգչի վերաբերյալ • Իմանան համակարգչի հիմնական սարքերը • Իմանան ինչ է պրոցեսորը • Որ հիշող սարքն է գտնվում համակարգային բլոկում 					
Վերջնարդյունքները	<p>Աշակերտները կկարողանան</p> <ul style="list-style-type: none"> • Ցույց տալ և բացատրել համակարգչի սարքերը • Կարողանան ճիշտ օգտագործել ստեղնաշարն ու մկնիկը • Օգնեն խմբի աշակերտներին • Կարողանան տարբերել ներմուծող և արտածող սարքերը 					
Գործողություններ (Ժամ, տևողություն)	Ուսումնական գործունեություն	Ուսումն գործունեություն	Հարցադրումներ		Կիրառվող մեթոդներ	
Մուտք 2 րոպե	<i>Աշակերտներ</i> Ողջույնի խոսք	Ողջույնի խոսք, հաշվառում				
Մկիզբ 10 րոպե	Պատասխանում են տրված հարցերին	Հարցեր եմ տալիս անցած դասից ամփոփում	Թվարկել անվտանգության կանոններ		Մտազրոհ	

<p>Ընթացքը 30 րոպե</p>	<p>Աշակերտները նստում են խմբերով:</p> <p>Որոնք են համակարգչի հիմնական սարքերը</p> <p>Ինչ է պրոցեսորը</p> <p>Համակարգային բլոկի հիշող սարքը</p> <p>Ինչ դեր են կատարում մկնիկը և ստեղնաշարը:</p> <p>Խմբերը ներկայացնում են իրենց թեման</p>	<p>Առաջարկում եմ աշակերտներին նստել խմբերով</p> <p>Բացատրեցի նոր դասը և տալով հարցեր հասկացա որ չեն հասկացել.</p> <p>Նորից բացատրեցի: Բաժանեցի քարտեր որտեղ կային հարցեր:</p> <p>Բացատրեցի որ ամեն խումբ պետք է ուսումնասիրի քարտի վրա գրվածը:</p> <p>Լսում եմ անհրաժեշտության դեպքում ուղղում</p>	<p>Թվարկեւի համակարգչի հիմնական սարքերը, որոնք են ներմուծող և արտածող սարքերը, ինչ է պրոցեսորը:</p>	<p>Ձևավորող գնահատում</p>
----------------------------	--	--	---	---------------------------

	<p>Համակարգչի վրա ցույց են տալիս:</p> <p>Աշակերտները լրացնում են և ներկայացնում են այն հարցերը, որոնք պարզաբանման կարիք ունեն</p>	<p>Ամփոփիչ հարցադրում</p> <p>Բաժանում եմ ինքնագնահատման ռուբրիկ և խնդրում եմ լրացնել այն՝ հավելված-3</p> <p>Վատարում եմ միավորային գնահատում</p>	<p>Համակարգիչը ամենահասարակ թվաբանական հաշվարկ իրականացնելու համար ի՞նչ պետք է անի:</p> <p>Անհրաժեշտության դեպքում համակարգչին կարելի՞ է լրացուցիչ սարք կցել</p>	
<p>Տնային աշխատանք (3 ըուպե)</p>	<p>Էջ 16 Հարց 1,2,3</p>			

Հավելված-2

Դասապլան-2

Ուսուցիչ՝ Մերի Հունանյան

Առարկա	Ինֆնատրամատիկա	Ամսաթիվ	Կիսամյակ	1-ին	Դասարան	7
Թեմա	Փաստաթղթի նախնական դիտում և տպագրում					
Օգտագործվող նյութեր	7-րդ դասարանի դասագիրք, տետր, համակարգիչ					
Դասի նպատակը	<ul style="list-style-type: none"> • Ամրապնդեն գիտելիքներ համակարգիչի վերաբերյալ • Իմանան փաստաթղթի նախնական դիտման գործիքը • Իմանան՝ ինչպես տպել փաստաթուղթը • Ինչպես աշխատեն տպիչ սարքի հետ 					
Վերջնարդյունքները	<p>Աշակերտները կկարողանան</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանան ճիշտ օգտագործել Print Preview հրամանը • Կարողանան տպել փաստաթուղթը • Կարողանան տպել փաստաթղթի նշված հատվածը, ընթացիկ էջը , նշված համարներով էջերը 					
Գործողություններ (Ժամ, տևողություն) Մուտք 2 րոպե Սկիզբ 10 րոպե	Ուսումնական գործունեություն <i>Աշակերտներ</i> Ողջույնի խոսք	Ուսումն գործունեութ Ողջույնի խոսք, հաշվառում	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ		
	Պատասխանում են տրված հարցերին	Հարցեր է տալիս անցած դասից՝ ամփոփում	Ինչպե՞ս պատճենել, կտրել և տեղափոխել տեքստի նշված հատվածը	Մտազրոհ		

<p>Ընթացքը 30 րոպե</p>	<p>Աշակերտները նստում են խառը՝ համակարգիչների մոտ:</p> <p>Ինչպե՞ս փաստաթուղթը տպելուց առաջ նախնական դիտել և փոփոխել պարամետրերը:</p>	<p>Առաջարկում եմ աշակերտներին նստել համակարգիչների մոտ:</p> <p>Բացատրեցի նոր դասը և տվեցի տեքստ, որպեսզի գրեն և միառժամանակ հարցեր տվեցի: Հասկացա որ չեն հասկացել. Նորից բացատրեցի: Այս անգամ նստեցրի խմբերով: Բաժանեցի քարտեր որտեղ կային հարցեր:</p> <p>Բացատրեցի որ ամեն խումբ պետք է</p>	<p>Ինչպե՞ս գտնել Print Preview հրամանը:</p> <p>Ինչպե՞ս տպել փաստաթուղթը:</p>	<p>Ձևավորող գնահատում</p>
----------------------------	--	--	--	---------------------------

	<p>Ինչպե՞ս տպել ամբողջ փաստաթուղթը:</p> <p>Ինչպե՞ս տպել նշված հատվածը:</p> <p>Նշված համարներով էջեր</p> <p>Համակարգչի վրա ցույց են տալիս և բացատրում:</p> <p>Լրացնում են այն:</p>	<p>ուսումնասիրեն քարտի վրա գրվածը կատարեն և բացատրեն</p> <p>Լսում են անհրաժեշտության դեպքում ուղղում</p> <p>Բաժանում են էլքի քարտեր՝ հավելված-4</p> <p>Ամփոփիչ հարցադրում</p> <p>Կատարում են միավորային գնահատում</p>		
<p>Տնային աշխատանք</p>	<p>Էջ 19 Հարց 1,2,3</p>			

Հավելված-3

Ինքնագնահատման ռուբրիկ

1	Այս թեման շատ լավ գիտեմ, կարող եմ բացատրել նաև ընկերներին
2	Կարծում եմ, որ բավականին լավ գիտեմ: Գրեթե բոլոր հարցերին կարողանում եմ պատասխանել
3	Ձգում եմ, որ այս թեման դեռևս սովորում եմ: Ունենում եմ հարցեր և պատասխանելիս այնքան էլ վստահ չեմ:
4	Ունեմ բազմաթիվ հարցեր: Մեծամասամբ չեմ հասկանում, թե ինչ է պետք անել:

Հավելված-4

Ելքի քարտ

Մի բան, որ արդեն գիտեի թեմայի մասին	Կասկածում եմ, որ....	Մի բան, որ ինձ զարմացրեց	Մի բան, որ ես սովորեցի

